

## ԴԱՍ 2.

### Բնական մարդը

Ներածություն

Բանալի համարներ

ՄԱՍ 2.1 Մեղքի խնդիրը

ՄԱՍ 2.2 Մեղքի հետևանքները

ՄԱՍ 2.3 Մեղքը Աստվածաշնչի տեսանկյունից

ՄԱՍ 2.4 Մեր ընտրությունը

Ամփոփում

Ինքնաքննություն

Նշումների  
համար

## Ներածություն

Առաջին բաժնում քննարկեցինք այն փաստը, որ Աստված մարդուն ստեղծեց հատուկ նպատակով: Մարդը պետք է անձնապես ճանաչի Իրեն: Աստված հավիտենական է, և այդ իսկ պատճառով ցանկանում է, որ մենք էլ հավիտենապես ապրենք՝ Իր հետ փոխհարաբերվելով:

Սա է մեր կյանքի նպատակը (Հովհ. 10:10, 17:3):

Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերով և կատարյալ (Ծննդ. 1:26–34): Մարդը ստեղծվեց ազատ կամքի իրավունքով: Նա ունի ազատ կամք՝ ընտրելու բարին կամ չարը: Մարդը չի արարվել ինչպես մի ռոբոտ: Սուրբ Գրքից տեղեկանում ենք, որ մարդը չինագանդվեց Աստծուն: Նա ընտրեց կատարել իր կամքը և ոչ թե Աստծո: Աստվածաշունչը դա անվանում է **մեղք**:

Ամենաախտոր փաստն այն է, որ մեղքը քանդում է այն գեղեցիկ փոխհարաբերությունը, որ Աստված կամենում էր ունենանք Իր հետ: Մեր մեղավոր էության պատճառով մենք չենք ճանաչում Նրան անձնապես (Ես. 59:2, Եփես. 2:1):

Այդ խնդիրն ավելի մանրամասնորեն կուսումնասիրենք հետևյալ հատվածներում:

## Բանալի համարներ

Հռովմ. 3:23

Հռովմ. 6:23

Ես. 59:2

## ՄԱՍ 2.1 Մեղքի խնդիրը

Այս աշխարհում ծնված յուրաքանչյուր ոք մեղավոր է: Նույնիսկ ամենագեղեցիկ, անմեղ թվացող երեխան անխուսափելիորեն մեղք կգործի: Առաջին անգամ գործած մեղավոր արարքը չէ, որ երեխային մեղավոր է դարձնում, այլ ավելի շուտ երեխան գործում է այդ մեղքը՝ դրանով արտահայտելով իր մեղավոր բնությունը, որով նա արդեն իսկ ծնվել է (Մաղ. 51:5):

Ի ծնե մարդը մեղք է գործում, որովհետև Աստծո վրա կենտրոնանալու փոխարեն նա կենտրոնացել է իր վրա: Մարդկային **ևսք** յուրաքանչյուր մեկի ցանկությունների և մտադրությունների կենտրոնն է: Փաստն այն է, որ մեզ հաճեցնելը շատ **բնական** է: Եվ երբ **բնական ձևով** ենք վարվում, անխուսափելիորեն մեղք ենք գործում և չենք հաճեցնում Աստծուն:

Աստված Մուրք է և ատում է ամեն տեսակ մեղք: Մեղքը անջրպետ է առաջացնում Աստծո և մարդու միջև: Մեղավոր մարդը չի կարող Մուրք Աստծո հետ փոխհարաբերություն ունենալ: Հետևապես՝ մեղքը վայր է գցում մարդուն այն փառքից, որ Աստված էր նախատեսել նրա համար: Մա ցույց է տալիս մեղքի ոչնչացնող բնույթը: Ի ծնե **յուրաքանչյուրը բաժանված է Աստծուց**: Եթե այդպես չլիներ, յուրաքանչյուր տղամարդ, կին կամ երեխա բնականորեն կճանաչեր Աստծուն: Ակնհայտ է, որ սա այդ դեպքը չէ.

*«Որովհետև ամենքը մեղանշեցին և Աստծո փառքից պակասված են»:*

(Հռովմ. 3:23)

Նշումների  
համար

Նշումների  
համար

## ՄԱՍ 2.2 Մեղքի հետևանքները

Մեղքի հետևանքները անհամար են: Միայն բավական է լսենք լուրերը կամ կարդանք թերթերը, այն բացահայտ կերևա մեր ամենօրյա իրականության մեջ:

Եկեք տեսնենք մեղքի հետևանքները Աստծո հետ փոխհարաբերության մեջ և ամենօրյա կյանքում.

- Վշտացնում է Աստծուն (Ծննդ. 6:5–7):
- Ծնում է մեղավորության զգացում (Սաղմ. 51:1–3):
- Ոչնչացնում է Աստծո հետ ունեցած մեր խաղաղությունը (Ես. 57:21):
- Առանձնացնում է մեզ Աստծուց (Ես. 59:1–2):
- Դատապարտություն է բերում և կարող է տանել դեպի հավիտենական պատիժ (Մատթ. 5:46):
- Ստրկացնում է (Հռովմ. 6:17):
- Հոգևոր կուրության պատճառ է դառնում (Բ Կորնթ. 4:4):
- Հոգևոր մահվան պատճառ է դառնում (Եփես. 2:1):
- Հուսահատություն է բերում (Եփես. 2:12):
- Փչացնում է (Տիտ. 1:15):

**ՄԱՍ 2.3****Մեղքը Աստվածաշնչի տեսանկյունից**

Աստվածաշունչը մեկից ավելի բառեր է գործածում է մեղքը նկարագրելու համար: Այս բառերը կարող են բաժանվել 4 հիմնական խմբերի.

**1) Շեղում նորմերից և ստանդարտներից**


- **Չարաք** – (Հ.Կ) սխալ ճանապարհով գնալ (Գատ. 20:16, Սաղ. 51:4, Առ. 8:35, 36):
- **Ավրն** – (Հ.Կ) ծռել և մոլորեցնել: Իմանալով ճիշտը՝ դիտավորյալ մեղք գործել: *Ավրնը* ավելի հեռուն է գնում, քան *չարաքը*, քանի որ մեղանչողը մեկն է, որ սրտի չարությունից է խախտում պատվիրանը (Հոր 33:27):
- **Շազահ** – (Հ.Կ) շեղվել, սխալվել, մեղանչել, մեղք գործել ոչ դիտավորյալ (Հոր 19:4, Գևտ. 4:13):
- **Փարաբասիս** – (Հ.Կ) կորցնել ճիշտ ճանապարհի հետքը, շեղվել ճիշտ ուղուց, խախտել սահմանը (Հռովմ. 4:15, Գաղ. 3:19):
- **Համարբիս** – (Ն.Կ) վրիպել (Մատթ. 1:21, Հռովմ. 6:23)
- **Փարաիթումս** – (Ն.Կ) շեղվել, սխալ ճանապարհով գնալ, կորցնել ուղին (Կող. 2:13, Եփես. 2:5):

Այս խումբը վերաբերում է մեր հանցանքներին, որ գործում ենք.

- Գիտակցաբար:
- Անգիտակցաբար:

Ամեն օր կարող ենք կարմիր լուսաֆորի տակով անցնել ոչ դիտավորյալ, բայց կարող ենք դա անել նաև դիտավորությամբ: Երկու դեպքն էլ խախտում է համարվում: Միշտ էլ լինում են նման իրավիճակներ, երբ մենք մեղանչում ենք՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար հատելով սահմանը:

*Նշումների  
համար*



**Նշումների համար**

**II) Դիրքի նկարագրությունը**

Մարդը բռնվում է մի ֆիքսված վիճակում.

- **Ռաշա** – հաճախ բարգձմանվում է չար կամ *անասարվածային* (Սաղ. 1:6, 37:28):
- **Աշամ** – վիրավորել կամ մեղավոր լինել (Ծննդ. 26:10):

Սա մեղավոր մարդու դիրքի նկարագիրն է, երբ նա մեղավոր է գգում Աստծո առջև իր սխալ արարքի համար: Նա իր մեղքի պատճառով հեռացել է Աստծո ճանապարհից և հայտնվել մի իրավիճակում, որտեղ մեղավոր է գգում:

**III) Դիտավորյալ ապստամբություն**

- **Փերշա** – բռունցք բափ տալ Աստծո վրա (Ես. 1:2, Ա Թագ. 12:19)

Սա այն վիճակն է, երբ մարդկանց բվում է, թե առանց Աստծո կարող են հաղթահարել և հպարտությամբ հռչակում են իրենց անկախությունը Աստծուց:

- **Անմիս**–(Ն.Կ) անօրինություն կամ ապստամբություն (Բ Կորնթ. 6:14, Ա Հովհ. 3:4):

Սա վերաբերում է առ Աստված ունեցած սրտի ներքին հակառակությանը, որը մերժում է ընդունել Աստծո իշխանությունը: Բացահայտ գործողություններ ընդդեմ Աստծո օրենքի: Սա ոչ թե անգիտակցական մեղք է, այլ դիտավորյալ, կանխամտածված դիրք կամ վերաբերմունք ընդդեմ Աստծուն:

**IV) Խտտորված գործողություն կամ վերաբերմունք**

- **Մարսահ** – լինել կովարար, ապստամբ և համառ (Սաղ. 78:8):
- **Մարսդ** – ապստամբել (Թվ. 14:9):

Աշխարհում խնդիրն այն է, որ ցանկանում ենք ամեն ինչ պատճառաբանել: Մի աստվածաբանության պրոֆեսոր ասել է. «Եթե ես չեմ կարող դա բացատրել իմ մտքով, ապա չեմ կարող հավատալ դրան»:

Սա խոչընդոտում է մեր հավատքին, որովհետև մենք անկարող ենք ամեն ինչ բացատրել: Այդ դեպքում, երբ չենք հասկանում Աստծո ճանապարհները, չենք էլ կամենում վստահել Նրան: Եվ նախընտրում ենք վստահել մեր սեփական կարողությանը, հասկացողությանը:

## ՄԱՍ 2.4 Մեր ընտրությունը

**Յ**ուրաքանչյուրը պատասխանատու է իր սեփական մեղքի համար (Եզեկ. 18:1–20, Հովմ. 14:12, Բ Կորնթ. 5:10): Բոլորս էլ մեղանշում ենք՝ հաճեցնելով մեր անձերը, այնինչ պետք էր ամենաշատը Աստծուն սիրել:

**Աստծո փափագն է, որ մենք ետ դառնանք մեղքից և կյանք ունենանք** (Եզեկ. 18:20–23): Աստծո ցանկությանը հակառակ՝ մարդը ընտրեց մեղանշելը: Թեև Աստված գիտեր այս ընտրության հետևանքները, այդուհանդերձ, Նա մարդուն տվեց ընտրելու իրավունք և ազատություն:


Մենք նույնպես պետք է ընտրություն կատարենք. կամ մնանք մեղքի մեջ՝ մեկուսանալով Աստծուց, կամ ընդունենք Հիսուսին՝ որպես մեր Տեր ու Փրկիչ, և այլևս մեղք չգործենք:

Աստված Սուրբ է, այսպիսով՝ նա չի կարող փոխհարաբերվել մեկի հետ, որ մեղանշել է: Նա ճանապարհ է պատրաստել մեր մեղքերը մաքրելու համար: Հիսուսն Իր կյանքը դրեց մեր փոխարեն: Սա նշանակում է, որ մենք այլևս ստիպված չենք լինի կրել մեղավորության զգացումը և տառապել մեր մեղքերի հետևանքներից: Սա նաև նշանակում է, որ ազատված ենք մեղքի իշխանությունից (Կող. 1:13):

Երբ ընտրում ենք Աստծո ճանապարհը, Աստված գալիս է մեր կյանքի մեջ և փոխհարաբերվում մեզ հետ: Սա այն նպատակն է, որի համար Նա մեզ արարեց: Մեր սրտերում դատարկություն ենք ապրում է, երբ չենք փոխհարաբերվում միակ և ճշմարիտ Աստծո հետ:

Աստված կամենում է, որ ճանաչենք Իրեն: Նա ուզում է, որ Իր զավակները դառնանք, և Իր թագավորության մի մասը կազմենք (Գուկ. 12:32–34): Նա ծրագիր և նպատակ ունի յուրաքանչյուրիս կյանքում և ցանկանում է, որ տեղյակ լինենք այդ ծրագրին և պատրաստ՝ Իր հանդեպ ունեցած սիրով իրականացնելու այն:

*Նշումների  
համար*



**Նշումների  
համար**

**Ամփոփում**

1. Բոլոր մարդիկ ծնված են մեղավոր բնությամբ:
2. Ի ծնե մեր դիրքը հակառակ է այն ամենին, ինչը հաճեցնում է Աստծուն:
3. Ամեն մեկը անհատապես պատասխանատու և հաշվետու է իր գործած մեղքերի համար:
4. Իր Սուրբ Հոգու միջոցով Աստված հանդիմանում է մեզ մեղքի համար (Հովհ. 16:7-10):
5. Հայր Աստված ուղարկեց Հիսուսին, որպեսզի Նա Իր վրա վերցնի մեր մեղքերը:
6. Որպեսզի Հիսուսի փրկագնող գործի մասը կազմենք, կարիք ունենք ընդունել մեր մեղքերը և խնդրել Աստծո ներումը՝ Իրեն տհաճություն պատճառելու համար: Մենք պետք է դավանենք Հիսուսին՝ որպես մեր Փրկիչ և մեր կյանքի Տեր:

**Ինքնաքննություն**

**Մ**եղքի խնդիրը այս հատվածի գլխավոր թեման է: Մեղքը Աստծո և մարդու միջև հիմնական խոչընդոտն է: Մեղքը կանխարգելում է հոգևոր, հավիտենական կյանքը և բույլ չի տալիս Աստծո հետ շարժվել առաջ:

Անգամ երբ մեր կյանքի վերահսկողությունը հանձնել ենք Հիսուսին, դեռևս մեղք ենք գործում և կարիք ունենք ազատ արձակվել այդ հին իշխանությունից: Ամենաառաջինը, որ պետք է անենք՝ **խնդիրը քաջահայտելն է**: Սա հարկադրված ջանք չէ: Սուրբ Հոգին կրքացահայտի դա մեր կյանքում (Հովհ. 16:7-10): Մեր պատասխանատվությունն է.

- Անկեղծ լինել Աստծո առջև:
- Բաց լինել Աստծո առջև:
- Խոստովանել Աստծուն:
- Սպասել Աստծուն:
- Լսել Աստծուն:

Սաղ. 139:23, 24–ում մենք գտնում ենք Դավթի հետևյալ աղոթքը.

*«Փորձիր ինձ ով Աստված և ճանաչիր իմ սիրտը,  
քննիր ինձ և ճանաչիր իմ մտածմունքները: Եվ տես,  
թե որ չար ճանապարհում լինեմ, առաջնորդիր ինձ  
դեպի հավիտենական ճանապարհը»:*

**Հաջորդ մի քանի օրերում մի հանգիստ վայրում արա՛ այս  
աղոթքը և բա՛ց Լոկի Աստծո առջև:** Նա քննում է մեր սրտերը և  
ճանաչեցնում մեզ մեր մեղքը: Եվ դա անում է սիրուց բխած: Նրա  
ցանկությունն է մաքրել մեզ և ոչ թե դատապարտել: Բա՛ց եղիր, և  
եթե անհրաժեշտ է, գրի՛ առ մասնավոր մեղքերը, որոնք քո մտքի  
մեջ են: Թո՛ւյլ տուր, որ Սուրբ Հոգին քեզ դեմառդեմ կանգնեցնի քո  
մեղքերի առջև: Սա շատ կարևոր է, եթե ուզում ես լինել Հիսուսի  
աշակերտը.

---

---

---

---

---

---

---

---

---

---

Ի՞նչ ես պատրաստվում անել սրա հետ.

---

---

---

---

---

